Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԱԴ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան -1 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 17.12.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 76 շահառուի Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 10 դեպքի վարում (վերափաստագրման գործընթացի կազմակերպում ընտանեկան նպաստ համակարգում, աջակցող միջոցի ձեռքբերման կազմակերպում, ընտանիքի անապահովության միավորի տեղեկանքի հիման վրա կազմակերպված վիրահատություն): 2 շահառուի համար սոցիալական աշխատողը ներկայացրել է եռամսյակային հրատապ օգնության դիմում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 11 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 7 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի նյարդային լարվածության թուլացմանը, հույզերի կառավարմանը, տագնապային իրավիճակների հաղթահարմանը:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Տնային սպասարկման շահառու ընտանիքներին տրամադրվել է սննդային փաթեթներ:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է թվով 10 միջոցառում և էքսկուրսիա, որոնց մասնակցել է թվով 20 շահառու: Կազմակերպվել է՝
  - Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառում տարեցների խնամքի ցերեկային կենտրոնում.
  - Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառում Կոմիտասի անվան պանթեոնի այգում:
  - Այցելություն Հայաստանի պատմության թանգարան:
  - Էքսկուրսիա դեպի Էջմիածնի Մայր տաճար:
  - Էքսկուրսիա դեպի Դիլիջան- Հաղարծին-Պարզ լիճ:
  - Էքսկուրսիա դեպի Նորավանք:
  - Ա. Խաչատրյան համերգասրահում շահառուները մասնակցել են Ալթունյանի անվան երգի պարի համույթի համերգային ծրագրին:
  - Ա. Խաչատրյան համերգասրահում շահառուները մասնակցել են Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի Ա. Դվորժակի «9-րդ սիմֆոնիա» համերգային ծրագրին

- Ամանորյա միջոցառում Աջափնյակի ցերեկային կենտրոնում:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 76 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 76 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 27 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 4 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: 3 շահառուի կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական), 15 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա: Թվով 5 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի հիման վրա, 5 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ, 2 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, 3 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է վերջինիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել է հետևյալ նյութերը.

- Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառումից կադրեր կազմակերպված ցերեկային կենտրոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid028NbYP7YTMQ3VoynrbJSuWDBcr9eBUFNDCXHXidWvZ7zdJvhZvw32UWDMr42WPfS1l&id=100081543423963) :
- Դեպի Դիլիջան-Հաղարծին-Պարզ լիճ🤍շահառուների էքսկուրսիայից մասնակցության մի քանի կադրեր (կարելի է տեսնել հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02pu8EV8hkepatoRTp3q2MY28kBPTJjtcfKjgAgY9vpMm4sheZ1DKNkjfFdXh9auQBl&id=100081543423963) :
- Դեպի Հայաստանի պատմության թանգարան էքսկուրսիայից մի քանի կադրեր (կարելի է տեսնել հետևյալ հղումով՝ Https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0bgFduDrV5Af6QdKYhypD4hB2y3TLb5SsMQo3YxrRgGCmPNJCzojBepsuT7ZnLCoMl&id=100081543423963) :
- Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառումից կադրեր կազմակերպված Կոմիտասի անվան պանթեոնի այգում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02XNNxaJ7yXobdMVNfomn28tp57YTR52DFdF1jxntMtmCB1m8zBNeB1CeEBLKx2LBJl&id=100081543423963):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը)։**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում։

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար։**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 73/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 64 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 70 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 2<br>Բ - 73 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 18 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 1 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն<br>սննդային փաթեթների տրամադրում | 7<br>72 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «17»12.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)